

**ԳՈՂ ՏՂԻ ՀԵՔԻԱԹԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու
բարբառ (խոսվածք)**

Ըլում ա, չի ըլում՝ մի թաքավորի քաղաքում մի պառավ կնիկ. ունենում ա մի տղա: Էդ կնիկարմատը գուլպա անելով հենց բան անում ա, որ տղին տալիս ա ուսումնարանումը: Էդ տղեն իրա ուսումը ավարտում ա, դուս գալիս:

Մերն ասում ա.— Որդի՛, էս ծեր կնիկ, որ գուլպա անելով քեզ էդ ուսումը սովորցրի, էլ հըմի կարողանըմ չեմ, որ գուլպա անեմ, տենամ քո ուսումովդ ինձ ոնց պտիս պահի:

Տղեն ասավ.— Նանի ջա՛ն, էս հաղաղը իմ ուսումը ձեռք չի տալ, դուն տուր էդ դագն ինձ, տանեմ բազարումը ծախեմ, մի քանի շահու տամ, որ բան առնեմ բերեմ, ուտենք, հըլա տենանք ե՛ւ քորժ կճարեմ:

Էրես դազը տղին: Տղեն դազը վի կալավ, գնաց փողոց: Էն քաղաքումը մի հարուստ ջիուդ կար. էն ջիուդն էլ ուներ մի տղա: Թաքավորի աղջիկը ջիուդն ուզել էր իրա տղի հըմա: Տղեն քուչումը գնալիս տեղը, էս դազ տանող տղեն ռաստ էկավ ջիուդի տղին:

Ջիուդի տղեն ասավ.— Էդ դազը ծախում ե՛ս:

— Հա՛, — ասավ, — ծախում եմ:

Բա.— Բի ըստի, տենա՛նք:

Տարավ. ձեռիցը առավ, հանեց վեց շահի, թե.— Առ, դազը տու ինձ:

Տղեն ասավ.— Բա վեց շահով կլի՞:

Ջիուդի տղեն ասավ.— Վնաս չունի:

— Դե՛, դու գիտես, — ասավ:

Ղազն էրես էդ տղին, ասավ.— Կտանես մեր տուն, իմ մորը կասես, որ էդ դազը մորթի, եփի, էս գնում եմ թաքավորի կուշտը, որ թաքավորի խորակ էփողին դարկեմ, դազը կդնես ոսկի սինուսն ու կդարկես:

Տղեն վի կալավ դազը տարավ էրես ջիուդի մորը, ասավ.— Տղեդ դրկեց, որ մորթես, եփես, ինքը դնաց թաքավորի կուշտը, ասավ, որ թաքավորի խորակ էփողին որ դրկեմ, կդնես ոսկի սինումն ու դազը կդրգես:

Տղեն դազը էրես ջիուդի մորը, դարձավ գնաց մի մարդի կուշտ, ասավ.— Ինձ մի ձեռք շոր տուր, հագնեմ, րիկունը կբերեմ, կտամ քեզ:

Էն մարդը մի ձեռք թագա շոր ուներ, էրես էդ տղին, էդ տղեն գնաց բազարը, մի փարթուկ էլ առավ, վրեն կապեց: Դարձավ գնաց ջիուդի մոր կուշտը, ասավ.— Ես թաքավորի խորակ էփողն եմ, քո տղեն ասավ, թե. «Ղազը դի ոսկի սինումը, ուղարկի»:

Ջիուդի մերը դազը էրես ոսկի սինումն ու էրես էդ տղին:

Էդ դազը վի կալավ էդ տղեն, էբեր իրա մոր կուշտը: Մերը ասավ.— Ա՛յ որդի, էս ի՞նչ բան ա:

Տղեն ասավ.— Մերա ջա՛ն, քու ի՞նչ բանն ա, դազը կի, ոսկի սինին էլ քեզ դատում:

Մերն ասավ.— Ա՛յ որդի, էդ թավուր բաներ անիլ մի, քեզ կբռնեն, կսպանեն:

Տղեն ասավ.— Նանի ջա՛ն, էդ քու բանը չի, էդ իմ բանն ա:

Ճաշին ջիուդի տղեն թաքավորի խորակ էփողին դարկեց մոր կուշտը, ասավ, որ ոսկի սինումը դնի դագն ու զարկի:

Մերն ասավ.— Վաղ եմ դրկել:

Եդ դնաց, ասավ տղին թե.— Քու մերն ասավ՝ վաղ եմ դրկել:

Տղեն ճաշից եղը գնաց տուն, մորն ասավ.— Ղազը ո՞ւմ ես տվել:

Մերն ասավ.— Ղազը տվել եմ թաքավորի խորակ էփողին:

Ջիւղի տղեն միտքն արավ, թե. «Ումից որ առել եմ դազը, նա կաներ էդ բանը»:

Պառավի տղեն գնաց էդ քշեր ջիւղի տան ճկատումը գրեց, թե. «Դազը վեց շահու կառնես՝ էդ հլա պուճուր օղբաթն ա, մեծ օղբաթը եղնից ա»:

Ջիւղի տղեն առավոտը վի կացավ, տեհավ, որ էդ գիրը գրած ա իրանց տան ճակատումը, որ. «Էդ պուճուր օղբաթն ա, մենձը եղնա ա»:

Պառավի տղեն միտքն արավ, որ մախսուզ ջիւղի տղեն պետք ա իրան ման գա, վաղ վի կացավ, գնաց մի դուքանչու կուշտը:

Ասավ.— Բի քու դուքանը էսօր ինձ տու, իմ ջերիցը իրեք մանեթ քեզ կտամ: Ինչ էլ որ առուտուր անեմ, էն էլ քեզ կտամ: Չանք ըլի առուտուրը սովորեմ, ուզում եմ, որ ինձ հմար դուքան դնեմ:

Դուքանչին ասավ.— Շատ լավ ես ասում, ես հլե բեզարել եմ, ուզում եմ մի քիչ ման գամ:

Դա գնաց ման գալու, տղեն նստեց դուքանումը, տեհավ, որ ջիւղի տղեն գալիս ա՝ էս դուքանին, էն դուքանին մտիկ անելով:

Տղեն ասավ.— Ջիւղի տղա՛, էդ ինչի՞ ես ման գալի ըտենց խլշկոտալի:

Ասավ.— Գլուխս մի օղբաթ ա էկել, ընդուր եմ ման գալի:

Տղեն թե.— Ի՞նչ օղբաթ ա էկել, բա մի պատմի տենանք ի՞նչ ա:

Ջիւղի տղեն պատմեց թե.— Էրեկ մի դազ առա վեց շահով, եդ տվի իրան, որկեցի իմ մոր կուշտը, ասի, թե. «Տար իմ մորը տուր, էփի, որ թաքավորի խորակ էփողին դարկեմ, դնես ոսկի սինու մեջ, դարկես»: Էդ գնացիլ էր մորս խափել էր, թե. «Ես թաքավորի խորակ էփողն եմ, իմ դազը տուր, որ տանեմ»: Առել ա, գնացել ա: Հըմի ես էն մասին ման եմ գալի, բալքամ էն տղին գտնում:

Պառավի տղեն ասավ.— Դու ըտենց ման գալով կարալ չես, որ գտնես:

Ջիւղի տղեն ասավ.— Բա ո՞նց անեմ, որ գտնեմ:

Ասավ.— Դու գնա շորերդ փոխի, քուչի դրաղին նստի, ուսումնարանի տղերքը դուս կգան, ամենքը իրանց գողոլթինը պատմելով կերթան, դու ընդի կիմանաս, որ դազն էլ փլանն ա տարել: Դու որ շորերդ փոխես, քեզ ճնանչիլ չեն, քաշվիլ չեն՝ կասեն, դու կլես, թե չէ՝ ըտենց ման գալով գատ չես գտնի:

Ջիւղի տղեն ասավ.— Բա ես ե՞րբ գնամ տուն, որ շորերս փոխեմ, գամ:

Ասավ.— Ուզում ես ըստի փոխի, ես քեզ շոր կտամ:

Ջիւղի տղեն փոխեց շորերը, ասավ.— Իրեք հազար մանեթ փող ունեմ պալտոյիս ջերումը, մուղաթ կաց՝ օքմին չղիպչի:

Ասավ.— Արխեին կաց:

Ջիւղի տղեն գնաց, քուչի դրաղին նստեց, պառավի տղեն մտիկ արավ, տեհավ, որ դուքանչին ընդեղ ման ա գալի, ձեն էրետ, թե. —Արի ըստի՛, իմ գնալու վախտն ա, արի քու դուքանի տեր դառ: Ջիւղի տղի ջերիցը իրեք մանեթ էրետ դուքանչուն, ինչ որ առուտուր էր արել, էն փողն էլ էրետ դուքանչուն, վի կացավ, գնաց իրանց տուն, հանեց իրեք հազար մանեթը համրեց, էրետ մորը:

Մերն ասավ.— Ա՛յ որդի, անիլ մի էդ բանը, քեզ կսպանեն:

— Էդ քու բանը չի,— ասավ տղեն,— իմ բանն ա:

Ջիւղի տղեն քուչի դրաղին նստած անկաճ էր դնում, մոնթերը ամենն իրան արածը ասելով էկան, գնացին: Տեհավ որ մըթնեց, իրան դազիցը մի բան ասող չէլավ, վի կացավ փոշման էկավ դուքանչու կուշտը, ասավ.— Բարի ըրգուն քի, դուքանչի՛:

Ասավ.— Աստու բարին քի:

Ասավ.— Ըստի մի դուքանչի տղա կար, ո՞ւր ա:

Դուքանչին ասավ.— Ջիուդի տղա՛, խելքդ խո կորցրիլ չե՞ս, ըստի տղեն ո՞վ ա տվել:

— Բա շորերս հանեցի, ըստի մի դուքանչի ջահել տղի պահ տվի, ես հենց գիտեմ էս դուքանն ա:

— Չէ՛, ջիուդի տղա, շըշկիլ ես գձել, ըստի ջահել տղա չկա, ես եմ իմ դուքանումը:

Ջիուդի տղեն վի կացավ, շատ փոշմանած գնաց տուն: Քիրն ասավ.— Խի՞ ես ըտենց տխուր:

— Ի՞նչ անեմ,— ասավ,— էդ շան որդուն գտնում չեմ:

Ասավ.— Ես ռավոտը կերթամ ման կգամ, տես կգտնեմ, թե չէ:

Ախպերը ասավ.— Ձեռը վի կալ, էդ շան որդին քեզ էլ կխայտառակե:

— Չէ՛,— ասավ,— պետք ա գնամ:

Էդ պառավի տղեն գնաց էդ քշերը ջիուդի տան դռանը գրեց, թե՛ «Էդ պուճուր օղբաթն ա, հըլա մենձը եղնութին ա»: Ռավոտը վի կացավ ջիուդի տղեն տեհավ, որ էդ գիրը գրել ա տան ճակատումը, գլուխը տարավ-բերեց:

Պառավի տղեն տեհավ, որ ռավոտը եղնեն ման պտի գան, վի կացավ գնաց մի պոյախչու կուշտ, հանեց իրեք մանեթ փող էրեսփիրան, թե. «Չուր ըիկուն ինչ որ առուտուր անեմ, էն էլ քեզ կտամ ըիկունը, օղանց թողուս, ես էլ մի քիչ սովորեմ պոյախչութիւնը»: Բոյախչին էրես իրան:

Ջիուդի ախչիկը ռավոտը վե կացավ վաղ, ըստուր-ընդուր ըեսին մտիկ անելով ման ա գալի, թե բալի ճնանչի. էկավ որ բոյախչու դուքանի դռնովը թե անց կենա, պառավի տղեն հարցուց էդ ախչկանը, թե.— Ինչի՞ ես ման գալի:

Ախչիկն ասավ, թե.— Ախպորս մի օղբաթ են արել, էն տղին եմ ման գալի:

Տղեն ասավ.— Ախչի՛, ըտենց ման գալով կարալ չես մի գադ գտնի, էդ քու ասած տղեն էս սըհաթին ըստի էր, մի քիչ չուստ էիր էկել, ռաստ կգեիր. ա՛յ էս մի գրվանքա թելը նրանն ա, ըստի ա դրել, թե. «Ուստա ջա՛ն, ներկի, որ էս ա կգամ, կտանեմ»:

Ախչիկը թե.— Ո՞նց անենք, որ դրան գտնունք:

Տղան ասավ.— Էն տղեն որ քեզ տենա, ըստի գալ չի:

Ախչիկն ասավ.— Բա ո՞նց անենք:

Պառավի տղեն ասավ.— Արի մտի էս օթախը:

Ախչիկը լսեց դրան, գնաց մտավ էն օթախը:

Պառավի տղեն գնաց կուշտը, ասավ.— Թե կթողաս գամ քո կուշտը՝ էն տղեն որ գա թելը տանելու, քեզ կասեմ:

Ախչիկը ճարահատած էթող տղին իրան կուշտը:

— Դուն ըտե մըչամ կացի,— ասեց պառավի տղեն,— որ ես ձեն տամ, դուս կգաս: Ղայիմ կբռնես էն տղին:

Էդ օթախիցը որ դուս էկավ, պառավի տղեն մտիկ արավ, տեհավ, որ բոյախչին քուշումը ման ա գալի, կանչեց, ասավ.— Ռավոտը իրեք մանեթը խո տվել եմ, ահան իրեք մանեթի էլ առուտուր եմ արել, էս էլ քեզ, իմ գնալու վախտն ա, ես գնում եմ:

Ասավ ու գնաց:

Մթնեց, ախչիկը տեհավ, որ ինքը մնար ընդի, ձեն ածեց: Դուքանչին զարմացավ, թե.— Էս ի՞նչ ձեն ա գալի:

Գնաց, որ օթախի դուռը բաց անի, տեհավ ջիուդի ախչիկը միշումը:

Ախչիկը թե.— Ըստի մի ջահել տղա կար, ի՞նչ էլավ:

Դուքանչին թե.— Շատ եմ գիտո՞ւմ, թե ինչ էլավ, մուշտարի էր, մի գրվանքա թել ուներ, թաց-թաց վի կալավ ու գնաց իրանց տուն, ես ի՞նչ գիտեմ ով էր:

Ախչիկը ըստեղ տեհավ, որ էդ էն տղեն էր, որ էդ օղբաթը արավ. դուքանչուն ասավ.— Ախպեր ջա՛ն, օքմուն չի բան ասես, թե էս օղբաթը իմ գլխին էկավ:

— Գնա՛, — ասավ, — ջիւղի ախչի՛կ, իմ ի՞նչ բանն ա, որ ասեմ:

Էն ախչիկը գնաց իրանց տուն: Ախպերը հարցրուց.— Խի՞ էս ըտենց քինթ ու պռունգ արած, գտա՛ր:

Ախչիկն ասավ.— Խոսացնիլ մի՛, որ սիրտսիվեր արին ա գնում:

Պառավի տղեն էն քշեր գնաց ջիղի տան ճակատին գրեց, թե. «Էդ պուճուր օղբաթն ա, հըլա մենձը եգնութին ա»:

Ջիւղի տղի հըրսանիքը նստեց, գնաց հրսանիքը թաքավորի տուն: Պառավի տղեն մոր տեղը նեղեց, թե.— Գնա թաքավորի աղբիսը ման արի, բալքի թաքավորի ախչկա լեհնիցը մի կտոր գտնուս:

Պառավը գնաց աղբիսի մեջ ման էկավ, մի կտոր գտավ, էբեր, էրետ տղին:

Տղեն վի կալավ, գնաց փողոց, էն կտորիցը մի լեհին առավ իրա համար, էրետ դարդուն թե.

«Շուտ կարի»: Դարդին կարեց, պառավի տղեն հագավ, դե ջահել տղա էր, բէխ չունէր, մորուք չունէր, դառավ մի սիրուն ախչիկ: Վի կացավ գնաց հըրսանիք:

Թաքավորի ախչիկը մտիկ արավ, տեհավ, որ իրա շորիցը մի օքմինի հագին էլ ա կա ոչ: Մեկ էլ մտիկ արավ, տեհավ, որ մնի հաքին կա, իրան նման էլ սիրուն ա, շատ աչքին դուր էկավ, կանչեց իրան կուշտը:

Ասավ.— Չվել իմ թաքավերիքի օրը իմ կշտիցը պետք ա ուրիշ տեղ չգնաս:

Պառավի տղեն ասավ.— Ոնց որ ուզում ես, ընենց էլ կանեմ:

Ռավոտը հրսանիքը գնաց ջիւղի տունը, թաքավորի ախչիկը պառավի տղին էլ հետը տարավ, օջով չէր գիդում, թե նա տղա ա. էքսը թաքավերեք էլավ. րիկունը պառավի տղեն ասավ թաքավորի ախչկան թե.— Քու հերը որ ընդի մարդ ա խեղդում, տեհել ե՛ս, թե չէ:

— Տեհած չեմ, — ասավ թաքավորի ախչիկը:

Ջիւղի տղեն ասավ թե.— Ես էլ տեհել չեմ, սրտով ուզում եմ մի տենամ:

Պառավի տղեն վի կալավ, թե.— Ես դիս ավելի եմ ուզում, որ տեհած ըլենք, իրեքս էլ գնանք տենանք:

Վի կացան, գնացին տենելու: Գնացին տեհան քանտիրը կախ արած, տակին մենձ ֆորը կտրած, ըսկամին կողքին դրած. մարդին վեր են հանում ըսկամուն, որ քանտիրը գձեն շըլինքը: Ջիւղի տղեն շատ զարմացավ, թե.— Էս ի՞նչ բան ա սա:

Պառավի տղեն վեր էլավ ըսկամուն, քանտիրը քաշեց գձեց շլինքը, ասավ.— Թաքավորի ախչիկ, արի հըլա դու էլ փորձի, տես ինչ փիս բան ա:

Թաքավորի ախչիկն էլ վեր էլավ ըսկամուն, քանտիրը քցեց շլինքը, տեհավ շատ փիս բան ա, վեր էկավ:

Պառավի տղան ասավ ջիւղի տղին.— Արի՛ դու էլ փորձի, տես թե վատ բան ա, գնանք թաքավորին ասենք, բալքի էս բանը վերջացնի:

Ջիւղի տղան էկավ վեր էլավ, քանտիրը քաշեց, որ գձեց շլինքը, պառավի տղեն դափիլ քացի էրետ, ըսկամին տակից ընկավ, խեղդվեց ջիւղի տղեն: Թաքավորի ախչիկը սկսեց լաց ըլիլ:

Ասավ.— Թաքավորի ախչի՛կ, ոչ անըծի, ոչ լաց իլ, էս ախչիկ չեմ, էս տղա եմ, արժանի կըլես դու ինձ, ոչ թե ջիղի տղին, չունքի մենք հայ քրիստոնյա ենք: Արի փախչենք, գնանք մեր տուն, որ օջով մեզ չտենա:

Էդ ախչկանը տարավ իրանց տուն, ասավ.— Դու մտի էս թորոնը, էս հենց բան կանեմ, որ քու հերդ չուստ մեզ պսակի:

Դարձավ մորն էլ ասավ.— Սրա հացն ու ջուրը անպակաս կանես չուր ես գամ: Վի կացավ գնաց ջիղի տան ճկատին գրեց, թե. «Էս պուճուր օղբաթն ա, մենձ օղբաթը եղնուց ա»:

Ռավոտը ջիուղը վի կացավ, տեհավ որ ո՛չ հարսը կա, ո՛չ տղա: Գնաց թաքավորի կուշտը Բալքի.— ասավ,— հարսն ու տղեն էկած ըլեն քու կուշտը:

— Չէ,— ասավ,— օքմին չի էկել:

Մարդ խեղդողնին գնացին տեհան, որ ֆորումը ջիղի տղեն խեղդված, էկան թաքավորին ասին.— Ջիղի տղեն խեղդվել ա, ախչիկը կշտին չի:

Ջիուղն ասավ.— Թաքավորը ապրած կենա, էլ էդ շան որդու արածը կըլի, լավն էն ա, որ ես ես քաղաքիցը կորչեմ:

Քաղաքի կողքին մենձ ծով կար, գնաց պրախոդչուն ասավ.— Ինչ որ վեշշ¹ կորկեմ, դու եղտեղ կգրես, որ րիկունը գամ՝ գնանք: Դա էկավ Բագար, որ մի համբալ բռնի, տանի: Պառավի տղեն գնաց մի համբալի փալան առավ, էկավ ջիղի աղաքը: Ջիուղն ասավ.— Համբա՛լ, կգաս իմ վեշշը կտանե՞ս պրախոդի կուշտը:

— Լա՛վ,— ասավ,— խի՞ չեմ գա, գործս ի՞նչ ա:

Դա գնաց կրեց, որը փետեղեն էր, շորեղեն անպետք բան, տարավ պրախոդի կշտին վեր ածավ, որը ոսկի-երծաթ էր՝ տարավ իր տանը կիտեց, չվել րիկուն կրեց, րիկունը հախն առավ, գնաց:

Ջիուղը գնաց պրախոդչու կուշտը, տեհավ, որ ոնչինչ չիկա, որը անպետք բան ա՝ ըստի ա, որը ոսկի, արծաթ ա, փող ա՝ կա ոչ:

Պրախոդչուն ասավ.— Էս ի՞նչ բան ա, էսքան ոսկի ու արծաթ եմ դրկե, էսքան փող եմ դրկե, ոնչինչ կա ոչ:

Պրախոդչին ասավ.— Ես ի՞նչ մեղավոր եմ, որ ինձ ասում ես, ինչ որ բերել են՝ ես էն եմ գրել: Ջիուղը տեհավ, որ նաղդ էլի էդ շան որդու արած բանն ա, էնդի էվետ ջիուղի շանը դուս էկավ, պրծավ:

Վերջին ժամանակը մի ուրիշ քաղաքումը մի թաքավոր կար, էդ թաքավորը էդ բաները իմանալով, մի գիր գրեց էս թաքավորին թե. «Ի՞նչ թավուր թաքավոր ես, որ ըգթավուր բան ըլում ա քու քաղաքումը, չես կարում գողը բռնես»:

Էդ թաքավորը էս բանի վրա շատ նեղացավ, ասավ իրա ժողովրդին թե.— Աստված կսիրեք, գտեք էդ տղին:

Ասին.— Ո՞նց գտնենք, կվախի, լիս չի ընկնի:

Ասավ.— Ըտե չենք անիլ, մի թուղթ կտամ ձեզ, որ էդ տղին գտնուք, ասեք, որ թաքավորը ասում ա՝ էն թաքավորի տանիցը մի բան գողանաս բերես, ես քու մեղքերդ կբախշիմ: Եթե սուտ դուս գամ, ինչ որ կարող ես, ինձ արա:

Պառավի տղեն իմացավ էդ բանը, գնաց թաքավորի ախչկան ասավ թե.— Բանը հիմի շիտակվեց, դուն քեզ հմար էդ թորնումը կկենաս, որ ես գնամ թաքավորի կուշտը, ասեմ, որ էդ բաները ես իմանամ, յա քեզ ինձ կտա, յա իմ գլուխը կկտրի:

Գնաց թաքավորի կուշտը, գլուխ էրետ, կանգնեց:

Թաքավորը հարցրեց.— Ո՞վ ես:

Ասավ.— Թաքավորը ապրած կենա, ես եմ էդ բաների անողը, կուզես բախշի իմ մեղքերը, կուզես գլուխս կտրի:

Թաքավորն ասավ.— Չէ՛, որդի, քու գլուխը կտրիլ չեմ, թե էդ բաների անողն ես, մի բան կասեմ, թե կկատարես, ինչ որ ուզես՝ կտամ:

¹ Իր—Օ. Բ.:

Ասավ.— Ասա՛, թաքավորը ապրած կենա, ինչ որ ուզես՝ կկատարեմ:

Թաքավորն ասավ.— Կուգեմ, որ գնաս էս մեր հրեան թաքավորիցը մի բան գողանաս, բերես:

— Աչքիս վրա,— ասավ պառավի տղեն,— ուզո՞ւմ ես՝ իրան գողանամ բերեմ:

Թաքավորն ասավ.— Ո՞նց կգողանաս իրան, թե ըտենց բան անես, աշխարքի տակին ինչ որ ուզես՝ կտամ:

— Դու ինձ քառասուն օր ժամանակ տուր, տես ո՞նց եմ բերում:

— Տվի՛, — ասավ թաքավորը:

Պառավի տղեն վի կացավ, գնաց էն թաքավորի կուշտը: Նրան մի խորակ էփող ուներ, գնաց նրա մոտ, ասավ.— Կուգես հացափորի պըհի, կուգես հախ էլ տուր, թաքավորիցը ես էլ ուզում եմ մի թիքա հաց ուտեմ:

Խորակ էփողը ասավ.— Հալա դու ըստի կաց, ես գնամ թաքավորի կուշտը:

Գնաց թաքավորին ասավ.— Մի տղա ա էկել, թե կարելի կըլի, թաքավորն ապրած կենա, բռնենք, ինձ քոմակ ըլի:

Ասավ.— Գնա բռնի:

Էկավ եղ տղին բռնեց: Էղ տղեն մնաց ըտրա կշտին մի քանի ժամանակ:

Մի օր խորակ էփողին ասավ.— Բի ես էփեմ խորակը:

Խորակ էփողն ասավ.— Դու կեփես, համը լավ չի լի՛լ թաքավորը իմ գլուխը կկտրի:

Տղեն ասավ.— Որ լավը չըլի, դուն ասա՛ ես ուրիշ տեղ ի գնացել, վրա չհասա, նոքարն ա էփե, թող իմ գլուխը կտրի:

Դա խորակն էփեց, ճաշին խորակ էփողը տարավ թաքավորի աղաքը:

Թաքավորը տեհավ, որ խորակիցը ընենց մի անուշ ֆոտ էկավ, որ ֆոտիցը կշտացավ, համը տեհավ որ ֆոտիցը դըհա լավ համ ունի:

— Ա՛յ տղա,— ասավ, էս խորակը ո՞վ ա շինել:

Վախիցը դա, թե. «Խորակը գեշն ա, գլուխս կկտրի էս ա», — ասավ,— ես, թաքավորն ապրած կենա, ուրիշ տեղ ի գնացել, վրա չհասա, նոքարն ա շինե:

— Գնա՛, կանչի,— ասավ,— նոքարը դա ըստի:

Գնաց կանչեց, Էկավ, թաքավորին գլուխ էրետ, կանգնեց:

Մտիկ արավ տեհավ, որ տղեն շատ սիրուն տղա ա, ասավ.— Էս խորակը ո՞վ ա շինել, ա՛յ տղա:

— Ես եմ շինել,— ասավ:

Ասավ.— Որ ըտենց ա, էլ դու գնալ չպըտիս խորակ էփողի կուշտը, դուն պետք ա իմ կշտին կենաս ամեն ժամանակ, իմ խորակը ըստեղ շինես:

— Շա՛տ լավ, թաքավորն ապրած կենա,— ասավ,— կկենամ, կշինեմ:

Էղ տղեն թաքավորի կշտին մնաց, խորակ ա շինում, իրան տեղն ա հավաքում, շինում, դուլլուղ անում:

Մի օր Էղ տղեն գնաց բազարը, մի տաս հատ զանգուլակ առավ, մին էլ մի սեփզի մորթի՝ պոզերը վրեն, Էբեր իրան օթախումը պահեց: Եղնա գնաց մի դյարգարի կուշտ, ասավ.— Ինձ հըմար մի դանդուկ շինի, որ մի մարդ միջումը խտոր ընկնի:

Դուրգարը շինեց դանդուկը, Էրետ Էղ տղին. վի կալավ, Էբեր իր օթաղումը պըհեց: Քշերվա մի վախտը հաքավ Էն մորթին, զանգուլակները վրիցը կախ արավ, գնաց տուն, մտավ թաքավորի կուշտը: Թաքավորը որ տեհավ, խիստ վախեց, ասավ.— Ո՞վ ես,— ասավ:

Թե.— Ես Հոգիառն եմ,— ասավ,— Էկել եմ, որ ֆոքիդ առնեմ:

— Ա՛յ Հրիշարակ,— ասավ,— ես դեռ մուրազ ունիմ, ի՞նչ փիս վախտի Էկար իմ ֆոքին առնելու:

Ասավ Ես Էլ չղմշեի քու ֆոքին առնելու, բայց աստու հրամանն ա:

— Բա ո՞նց պրտի լի, կարալ չե՞ս ինձ փրկի. ըտիանց մի քանի օրեն ժամանակի:

— Ինչպես չէ, թե դու Էլ ինձ հետ գաս գնանք աստու կուշտը, ես Էլ դսնչանք կանեմ, դու Էլ դանչանք կանես, ես գիտեմ, որ աստված կբախշի քեզ մի քանի տարի՝ եթե գաս, թե չէ՝ հիմի ֆոքիդ կառնունք:

— Դե՛, — ասավ, — ո՞նց գնանք:

Ասավ. — Դու կացի ըտի, ես գնամ աստծանե մի դանդուկ բերեմ, ինչպես որ ըտեղ խտոր ընկած ես, էնպես Էլ գնանք աստծու կուշտը:

Թաքավորն ասավ. — Դե՛, գնա բի:

Գնաց դանդուկը վի կալավ իրա օթախիցը, եբեր ընդի վեր Էդիր:

— Դե՛, թաքավորն ապրած կենա, վեկաց ըտենց տկլոր արի զանտուկումը խտոր ընկի:

Թաքավորը վի կացավ ու Էկավ զանտուկումը խտոր ընկավ: Շամդամը² վառեց, Էդիր կողքին, որ սիրտը չճաքի:

— Թաքավորն ապրած կենա, — ասավ, — Էսա մենք գնում ենք աստծու կուշտը, ինչ որ ես ընդի կանեմ, պետք ա դուն Էլ ընենց անես, որ աստված բախշի:

— Շատ լավ կըլի, — ասավ թաքավորը, — ինչ որ դու կանես, ես Էլ ընե կանեմ:

Դրան շլակեց ու ընկավ ճամփա: Շատ գնաց, թե քիչ, Էկավ թաքավորի քաղաքը, տարավ թաքավորի ամարաթումը վեր Էդիր: Իմացրուց թաքավորին, իրան սինողին, թե. — Էկե՛ք, տեհե՛ք, բան եմ բերել:

Էկան հավաքվեցին:

Պռավի տղեն ասավ. — Անկաճ դրեք, տեհեք ի՞նչ ձեն ա դուս գալիս ըստիան:

Պռավի տղեն ասավ Էկել ենք աստծու կուշտը, ինչ որ ասել եմ, պետք ա անես:

Իշի պես զոաց՝ նա Էլ զանդուկի միչիցը զոաց, շան պես հաչեց՝ նա Էլ զանդուկի միչիցը հաչեց, գիլի պես օռնաց՝ նա Էլ զանդուկի միչիցը օռնաց:

Թաքուն թաքավորին ասավ. — Գիտե՛ս, խի՞ստ եմ ըթենց անում:

Թաքավորն ասավ. — Ինչի՞ ես անում:

Ասավ. — Հսենց եմ անում, որ դու նրան ասես, թե քեզ ըտենց զոացնողը ինձ Էլ էն բաները կանի՞, թե ոչ:

— Դե ապրես, մի բաց արա, տենանք ի՞նչ կա մեչը:

Պռավի տղեն բաց արավ դանդուկը, տեհավ թաքավորը տըկլոր զանդուկի միչումը, շամդամը վառած կշտին: Վեր կացավ, մտիկ արավ դե՛ս, դե՛ն, տեհավ՝ աստված չկա, թաքավորը իրան սինողովը կշտին կանգնած են: Ասավ. — Թաքավո՛ր, ես ամոթով մնացի, շոր տվեք հագնեմ, տենենք ես ի՞նչ բան ա Էկել իմ գլուխը:

Շորը բերին, տվին՝ հագավ:

Թաքավորը հարցրուց, թե. — Քեզ ո՞վ ա բերել:

Թե. — Հոգիաոր զանգուլակով Էկավ իմ մոտ, թե՛ հոգիդ առնեմ պտի. նա եբեր:

Թաքավորը պռավի տղին կանչեց, թաքավորին հարցրեց, թե. — Էս տղին ճնանչում ե՞ս:

Ասավ. — Ճնանչում եմ:

Հարցրուց թե. — Ո՞վ ա, որ ճնանչում ես:

Թե. — Իմ խորակ Էփողն ա:

— Ոչ թե՛ քու խորակ Էփողն ա, էն տղեն ա, որ էն բաները անում ա, քեզ Էլ բերողը դա ա:

— Դրո՛ւստ:

² Շամդան—մոմակալ—Օ. Կ.:

Թե.— Դրուստ, բա խի՞ իր ինձ գիր գրի վրեն գրում, թե. «Մի գողն ի՞նչ ա, չես կարում բռնի», բա էդ գողը ո՞նց ա քի գողացել ու բերել, որ դու չես իմացել:

Թե.— Ես մեղա աստծու:

— Էդ բավական չէ, պետք ա էս տղին մի հացի հասցրենք, ես խոսք եմ տվե:

Թե.— Ես իմ թաքավորությանս կեսը տվի:

— Երբ որ դու տվիր, ես էլ տվի:

Պռավի տղեն ասավ.— Ես թաքավորություն ուզում չեմ, ես քու ախչիկդ եմ ուզում:

— Ո՞ւր ա իմ ախչիկը:

— Էն ա մեր տանը:

— Դե գնա բի, տվի որ տվի:

Գնաց ախչիկն առավ, էբեր օխտն օր, օխտը քշեր հրսանիք արին, ջուխտ թաքավորնին դրան հասցրին իրան մուրազին:

Աստծանե իրեք խնձոր վեր ընկավ, մինն՝ ինձ, մինն՝ ասողին, մինն էլ՝ լսողին: